022201.01.6 - «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ

1. Կրթական ծրագրի անվանումը

<<ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

2.1. ՈԱՇ-ի մակարդակ

Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ

2.2. Որակավորման աստիճան

Պատմության բակալավր

2.3. Կրեդիտների քանակը

240

3. Բուհ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան

4. Ֆակուլտետ

Հումանիտար գիտությունների

5. Ամբիոն

Պատմություն

6. Ուսուցման լեզու

Հայերեն

7. Ուսուցման ձևը

Առկա, հեռակա

8. Արտոնագրում

Արտոնագրված է ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից

մասնագիտության ծածկագիրն է՝ 022201.01.6:

9. ԿԾ-ի մուտքի պայմաններ

Պատմության բակալավր, <<Պատմություն>> մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա պետական նմուշի վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, կամ միջնակարգ մասնագիտական կրթության վկայական կամ բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմ և հաջողությամբ հանձնած լինի քննություններ <<Հայոց լեզու և գրականություն>> (փոխանցվում է ատեստատից), <<Հայոց պատմություն>>, <<Համաշխարհային պատմություն>> կամ <<Օտար լեզու>> առարկաներից:

10. Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

Պատմության բակալավր, “Պատմություն” մասնագիտության բակալավրի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում չորս տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 240 կրեդիտ է՝ տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ): ԿԾ-ը նախատեսում է սովորողի կիսամյակային 20-շաբաթյա բեռնվածություն, որից 4-ը՝ քննական:

Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. Աշխարհայացքային և հաղորդակցական կրթամաս
2. Առողջապահական և բնագիտական կրթամաս
3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս
4. Հատուկ մասնագիտական կրթամաս
5. Հետազոտական կրթամաս՝ կուրսային աշխատանք, մասնագիտական պրակտիկա, ավարտական աշխատանքի ձևակերպում և պաշտպանություն:

11. Ծրագրի նպատակը

Ծրագիրը նպատակաուղղված է պատմության բնագավառում բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստմանը՝ կրթության, գիտության, ինչպես նաև այլ բնագավառներում աշխատանքային գործունեության համար:

Ծրագրի նպատակներն են՝

✓ ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների ձևավորում և զարգացում, որոնք անհրաժեշտ են ապագայում սովորողների մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար,

✓ պատմական գիտության մեթոդաբանական և տեսական հիմքերի խորացված ուսումնասիրության կազմակերպում,

✓ ինքնուրույն գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների ձևավորում, գիտականորեն հիմնավորված ուսուցման և գիտահետազոտական աշխատանքի ժամանակակից տեխնոլոգիաների յուրացման ապահովում,

✓ ուսանողների մոտ ինքնաքննադատության, ինքնակրթության, ինքնազարգացման անհրաժեշտության ձևավորում,

✓ Ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ստանձնելու ունակ, իր գործունեությամբ ազգային և համամարդկային արժեքների տարածմանը նպաստող մարդու և քաղաքացու ձևավորում:

12. Ծրագրի կրթական վերջնարդյունքները.

022201.01.6 «Պատմություն» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի վերջնարդյունքներն են.

Ա. Գիտելիք և իմացություն

Ա.1. Պատմագիտության բովանդակության, զարգացման փուլերի, պատմության իմաստի և նշանակության իմացություն, ազգային և համաշխարհային պատմագիտական հայեցակարգերի և պատմական գործընթացների հիմնարար և ժամանակակից հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն,

Ա.2. Հայոց և համաշխարհային պատմության ընթացքի, փուլերի, կարևորագույն իրադարձությունների, համաշխարհային պատմական մտքի, պատմական առանձին դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների պատմագիտական հայացքների և հիմնական գաղափարների, ավանդական և նոր տեսությունների իմացություն,

Ա.3. Պատմական սկզբնաղբյուրների, նրանց պարունակած փաստերի վավերականության ստուգման մեթոդների իմացություն,

Ա.4. Հայաստանի հարակից երկրների պատմության, հայ-ադրբեջանական, հայ-վրացական, հայ-թուրքական, հայ-իրանական, հայ-ռուսական հարաբերությունների իմացություն, հարևան երկրների՝ տարածաշրջանային զարգացումներում ու միջազգային քաղաքականության մեջ ունեցած դերի ու նշանակության ընկալում,

Ա.5. Հայաստանի պատմական աշխարհագրության, հնագիտության, ազգագրության, հայ մշակույթի պատմության, արխիվագիտության, թանգարանագիտության, պատմական օժանդակ առարկաների ընդհանուր դրույթների և հիմնախնդիրների իմացություն,

Ա.6. Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաների հիմնադրույթների, սկզբունքների և հայեցակարգերի, համաշխարհային և տարածքային հիմնախնդիրների իմացություն,

Ա.7. Մանկավարժության և հոգեբանության հիմնադրույթների, մեթոդական նորմերի, դաստիարակության և ուսուցման հնարների, օրինաչափությունների, մեթոդների և ձևերի, կրթության և դաստիարակության ժամանակակից տեխնոլոգիաների իմացություն,

Ա.8 ՀՀ Սահմանադրության և իր մասնագիտական գործունեությանն առնչվող օրենքների և իրավական նորմերի իմացություն:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Բ1. Կոնկրետ տեսական գիտելիքները կիրառելով՝ պատմական իրողությունները հասկանալու, փաստերն ու երևույթները համեմատելու, պատմական զարգացման

փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու կարողություն,

Բ2. Պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգման և տեսական վերլուծության, սեփական դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություն,

Բ3. Համաշխարհային և հայրենական պատմության հրատապ ու հանգուցային հարցերի վերաբերյալ ժամանակակից մոտեցումներում, տեսակետներում և պատկերացումներում ազատ կողմնորոշվելու կարողություն, տեղեկույթի համադրման միջոցով համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու կարողություն,

Բ4. Քննադատաբար և համակարգված օգտագործելով իր գիտելիքները՝ պատմական իրադարձությունների ու գործընթացները վերլուծելու, դրանց տրամաբանությունը, օրինաչափությունները, իրադարձությունների պատճառա-հետևանքային կապերը հասկանալու կարողություն, արդիական և նորարարական մեթոդների օգնությամբ իր գիտելիքներն ու իմացությունը կիրառելով՝ դիրքորոշումներ ձևակերպելու և հետազոտություններ կատարելու կարողություն։

Բ5. Սկզբնաղբյուրների հետ աշխատելու և դրանցում առկա ինֆորմացիայի տարբեր ձևերը օգտագործելու, տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման ունակություն, տեղեկույթը կառավարելու, իր դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություններ,

Բ6. Պատմության տարբեր շրջափուլերում ի հայտ եկած քաղաքական, տնտեսական, հասարակական-պետական, մշակութային կառույցներն ու գաղափարաբանությունները համադրելու, դրանց փոխակերպությունների առանձնահատկությունները վեր հանելու կարողություն,

Բ7. Մասնագիտական բարեվարքության նորմերը պահպանելով՝ զեկուցումներ պատրաստելու, հետազոտություններ կատարելու կարողություն,

Բ8. Պատմագիտության զարգացմանը և բանավեճերին նպաստելու համար համապատասխան հետազոտական թեմաներ բացահայտելու ունակություն,

Բ9. Պատմության ուսումնասիրման փորձն ընդհանրացնելու, տարբեր դարաշրջանների վերաբերյալ համապատասխան ֆայլեր, արխիվներ ստեղծելու ունակություն՝ օգտագործելի ինչպես հետազոտական, այնպես էլ մանկավարժական աշխատանքի ընթացքում։

Բ10. Օտար լեզուներով պատմագիտական տեքստեր կամ բնօրինակ փաստաթղթեր ընթերցելու և ըստ անհրաժեշտության տեղեկություններն ամփոփելու կամ համառոտելու ու վերարտադրելու ունակություններ,

Բ11. Մասնագիտական գործունեության պլանավորման, կազմակերպման, ղեկավարման, վերահսկման, ուսուցման արդյունքների և սովորողների ձեռքբերումները գնահատելու կարողություն, ձեռք բերած տեսական գիտելիքները մասնագիտական գործունեության բնագավառում կիրառելու հմտություններ,

Բ12. Ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառման կարողություն, մանկավարժական հմտություններ:

Գ. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ

Գ1. Մայրենի և առնվազն մեկ օտար լեզվով հաղորդակցվելու, գիտահետազոտական և մանկավարժական խնդիրները մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացատրելու կարողություն:

Գ2. Գրավոր և բանավոր խոսքը տրամաբանորեն ճիշտ ձևակերպելու, իր աշխատանքը գիտական հիմունքներով կազմակերպելու կարողություն,

Գ3. Անհրաժեշտ տեսություններ, մեթոդներ և ժամանակակից գործիքակազմ գործնականում կիրառելու կարողություն, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ՝ մասնագիտական ոլորտում խնդիրների վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու կամ խնդիրներին նպաստող հիմնարար գործոնները վերլուծելու և աշխատանքը դյուրացնելու նպատակով,

Գ4. Մասնագիտությանը վերաբերող համապատասխան սկզբնաղբյուրները (հնագիտական և ազգագրական նյութեր, բանավոր պատմություն, քարտեզներ, ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ, հաշվետվություններ և այլն) հավաքագրելու, մշակելու և մեկնաբանելու, քանակական և որակական տվյալները վերլուծելու կարողություն:

Դ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Դ1. Ընթացիկ իրադարձություններն ու գործընթացները և անցյալի ու ներկայի փոխհարաբերությունները գնահատելիս քննադատական և ինքնաքննադատական մտածողություն դրսևորելու ունակություններ,

Դ2. Պատմության վերաբերյալ գիտելիքներն ու արդյունքները համադրելու և պատմագիտական գիտելիքի միջազգային չափանիշներին և չափորոշիչներին

համապատասխանեցնելու, ինչպես նաև պատմագիտական գիտելիքի միջազգային ձեռքբերումները տեղայնացնելու և տեղական (ազգային) առանձնահատկությունների հետ համադրելու կարողություն,

Դ3. Մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև նոր իրավիճակներին համապատասխան որոշումներ կայացնելու և սովորելու կարողություն:

Դ4. Թիմում աշխատելու, որոշակի ինքնուրույնություն ցուցաբերելով թիմային առաջադրանքներ կատարելու և որոշումներ կայացնելիս պատասխանատվություն ստանձնելու կարողություն,

Դ5. Անհատների և խմբերի հետ հաղորդակցվելու, համագործակցության միջոցով միջառարկայական խնդիրներ լուծելու կարողություն, կազմակերպչական կարողություններ, միջանձնային գործնական հմտություններ, բարոյական պատասխանատվության կարողություն,

Դ6. Գիտելիքների և կարողությունների բավարար մակարդակ՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում «Պատմություն» մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար:

Ե. Ինքնուրույնություն և պատասխանատվություն

Ե1. Իր լիազորությունների շրջանակներում գործունեություն ծավալելու, որոշումներ կայացնելու թիմի անդամների և նրանց մասնագիտական զարգացման համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն,

Ե2. Փորձագետների կարծիքները դիտարկելու, աշխատանքային փաստաթղթերն ու հաշվետվությունները ձևակերպելու և համապատասխան տեղեկատվություն ներկայացնելու կարողություն,

Ե3. Պատմաբանի մասնագիտական և էթիկական պատասխանատվության գիտակցելու և հանրային գործընթացների վրա հետազոտական արդյունքների հիման վրա կատարվող որոշումների ազդեցությունը ընկալելու կարողություն:

Ե4. Ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ստանձնելու, իր գործունեությամբ ազգային և համամարդկային արժեքների տարածմանը նպաստելու կարողություն:

Ե5. Ունակ է իր կրթական պահանջմունքները բացահայտելու և հետագա ուսումնառության վերաբերյալ ինքնուրույն որոշում կայացնելու ունակություն:

<<Պատմություն>> մասնագիտությամբ բակալավրը ծրագրի ավարտին, ելնելով մասնագիտական գործունեության խնդիրներից և հիմնական կրթական ծրագրի նպատակներից, պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին.

1) Ընդհանրական կոմպետենցիաներ

ա) Գործիքային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ԳԿ)

✓ վերլուծության և համադրության կարողություն (ԳԿ -1),

✓ կազմակերպչական կարողություններ (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում) (ԳԿ-2),

✓ հենքային ընդհանուր գիտելիքների տիրապետում (ԳԿ - 3),

✓ պետական լեզվով հաղորդակցվելու կարողություն (ԳԿ - 4),

✓ օտար լեզվով հաղորդակցվելու կարողություն (ԳԿ - 5),

✓ համակարգչային տարրական հմտություններ (ԳԿ - 6),

✓ տեղեկույթը կառավարելու հմտություն (տեղեկույթի ձեռք բերում, համակարգում, վերլուծում) (ԳԿ - 7),

✓ խնդիրներ լուծելու կարողություն (ԳԿ - 8),

✓ որոշումներ կայացնելու կարողություն (ԳԿ - 9):

բ) Միջանձնային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ՄՁԿ)

✓ քննադատության և ինքնաքննադատության կարողություն (ՄՁԿ - 1),

✓ միջանձնային գործնական հմտություններ (ՄՁԿ - 2),

✓ թիմային աշխատանքի կարողություն (ՄՁԿ - 3),

✓ միջմշակութային տարբերությունները և բազմազանությունները ընկալելու կարողություն (ՄՁԿ - 4),

✓ բարոյական պատասխանատվության կարողություն (ՄՁԿ - 5),

✓ միջմշակութային տարբերությունները ճանաչելու կարողություն (ՄՁԿ - 6):

✓ Բարոյական արժեքներ (ՄՁԿ - 7):

գ) Համակարգային կոմպետենցիաներ (այսուհետև՝ ՀԳԿ)

✓ գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն (ՀԳԿ -1),

✓ հետազոտական կարողություն (ՀԳԿ -2),

✓ ուսումնառության կարողություն (ՀԳԿ -3),

✓ նոր իրավիճակներին հարմարվելու կարողություն (ՀԳԿ -4),

✓ ինքնուրույն աշխատելու կարողություն (ՀԳԿ -5),

✓ որակը վերահսկելու կարողություն (ՀԳԿ -6):

դ) Բուն մասնագիտական կոմպետենցիաներ (ՄԿ)

1. ունենա հիմնարար մասնագիտական գիտելիքներ պատմությունից և կարողանա դրանք կիրառել գործնականում / ՄԿ-1
2. կարողանա կատարել պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգում և տեսական վերլուծություն/ ՄԿ-2
3. կարողանա համադրելու պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները /ՄԿ-3
4. կարողանա հասկանալ հասարակական կյանքի վրա համաշխարհային գործընթացների ազդեցությունը /ՄԿ-4
5. ունենա սկզբնաղբյուրների հետ աշխատելու հմտություններ/ ՄԿ-5
6. կարողանա կոնկրետ տեսական գիտելիքները կիրառել պատմական իրողությունները հասկանալու համար /ՄԿ-6
7. կարողանա պատմական կոնկրետ փաստերն ու երևույթները բացահայտել ընդհանուր տեսությունների, գաղափարների տեսանկյունից /ՄԿ-7
8. կարողանա գիտելիքները կիրառել համաշխարհային նորագույն քաղաքական զարգացումները հասկանալու համար /ՄԿ-8
9. ամբողջական պատկերացում ունենա պատմական գործընթացների վերաբերյալ/ՄԿ-9
10. ունենա պատմագիտական հետազոտություններ կատարելու ունակություններ/ ՄԿ-10
11. կարողանա պատասխանատվություն ստանձնել հետագա ուսումնառության համար /ՄԿ-11

13. Ուսումական աշխատանքի տեսակներն են.

✓ դասախոսություններ
✓ սեմինարներ, գործնական պարապմունքներ,
✓ ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, կոնկրետ իրավիճակների վերլուծություն, դերային գործնական խաղեր, կլոր սեղան, զեկույց),
✓ արտադրական պրակտիկա,
✓ ավարտական աշխատանքի ձևակերպում և պաշտպանություն:

14. Դասավանդման մեթոդներ

✓ դասախոսություն, թեմատիկ սեմինար, սեմինար-բանավեճ, անհատական գործնական աշխատանք, խմբային գործնական աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր, գործնական ուսուցման տիպային դաս, թվային ուսուցում, տեսանյութերի դիտում և քննարկումներ, ուսումնական այցելություն:

15. Ուսումնառության մեթոդներ.

✓ Դասագրքերի և սկզբնաղբյուրների ուսումնասիրություն, թիմային քննարկում, կոնկրետ իրավիճակի կամ իրադրության վերլուծություն, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, նպատակին ինքնուրույն հասնելու ճանապարհների փնտրման հանձնարարություններ, փորձագիտական խաղեր, վարժություններ, գիտելիքները գործնականորեն կիրառելու ինքնուրույն աշխատանքներ

16. Գնահատում

ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:

Բակալավրիատի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին:

Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում.

✓ ինքնուրույն կատարվող աշխատանքներ,

✓ գործնական (սեմինար) աշխատանքներին ուսանողի մասնակցություն,

նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները,

✓ ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:

16.1. Գնահատման մեթոդներ

✓ Առաջադրանք, պատասխանի ընտրությամբ կամ կարճ ազատ պատասխանով թեստեր, հարցեր ինքնավերլուծության համար, դատողությունների ձևակերպում (հիմնավորում, անդրադարձ, գնահատում, եզրակացություն), հիմնախնդրի վերաբերյալ վարկածների առաջադրում, գործընկերների գնահատում, ռեֆերատ, միջանկյալ և հանրագումարային քննություն:

17. Մասնագիտական գործունեության ոլորտները.

«Պատմություն» մասնագիտությամբ բակալավրը բուհն ավարտելուց հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները.

1. Հանրակրթական դպրոցներում՝ որպես պատմության, հասարակագիտության և հայ եկեղեցու պատմության ուսուցիչ
2. վարժարաններում, քոլեջներում՝ որպես պատմության ուսուցիչ
3. թանգարաններում՝ որպես գիտաշխատող

4. արխիվներում՝ որպես արխիվապահ
5. պետական և հասարակական կազմակերպությունների աշխատակից:

18. Հետագա ուսման հնարավորությունները.

Պատմության բակալավրի մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու

- մագիստրատուրայում՝ ստանալու պատմության մագիստրոսի որակավորում,
- մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան: